ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 7, 1965 Общественные науки

Ռ. Հ. Ահարոնյան

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՆՈՐՈՇ ԳԾԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխատանքը միայն մարդուն հատուկ գործունեություն է, մարդկային հասարակության գոյության, նրա զարգացման ու կատարելագործման հավերժ ու բնական պայմաններ, հանրային արտադրության հիմքերի հիմքը։

Բազում դարերի ընթացքում շատ սերունդների աշխատանքով են ստեղծվել արդի աշխարհում եղած նյութական բարիքներն ու հոգևոր արժեքները։ Ահա թե ինչու մարդկային հասարակության զարգացման պատմությունը հենց նյութական և հոգևոր բարիքներ ստեղծողների պատմությունն է։

Աշխատանքը, որպես մարդու և բնության միջև նյութափոխանակության համընդհանուր բնական պայման, միատեսակ ընդհանրություն ունի հասարակական-տնտեսական բոլոր ֆորմացիաներում։ Աշխատանքի այդ ընդհանրությունը, Կ. Մարքսի խորը գիտական բնորոշմամբ, պայմանավորված է նրանով, որ այն «նախ և առաջ մարդու և բնության միջև կատարվող պրոցես է· մի պրոցես, որի մեջ մարդն իր սեփական գործունեությամբ միջնորդավորում, կարգավորում և վերահսկողության է ենթարկում նյութերի փոխանակությունը բնության և իր միջև։ Բնության նյութի դիմաց նա ինքն էլ կանգնած է իբրև բնության ուժ, իր մարմնին պատկանող բնական ուժերը՝ բազուկներն ու ոտքերը, գլուխն ու մարմինը նա շարժման մեջ է դնում, որպեսզի բնական նյութը յուրացնի իր սեփական կյանքի համար պիտանի որոշ ձևով»[1]։

Այսպես, ուրեմն, լինելով սպառարժեքներ ստեղծելու համար մարդկանց նպատակահարմար գործունեություն, մարդու և բնության միջև նյութերի փոխանակության ընդհանուր պայման, մարդկային կյանքի հավերժ բնական պայման, աշխատանքը միաժամանակ կախված չէ այդ կյանքի որևէ ձևից, ընդհակառակն, այն հավասարապես ընդհանուր է հասարակական կյանքի բոլոր ձևերի համար։

Մյուս կողմից, աշխատանքը որպես նյութական բարիքների արտադրության պրոցես, արտահայտում է ոչ միայն մարդու վերաբերմունքը բնության առարկաների և ուժերի նկատմամբ, այլև համատեղ աշխատանքային գործունեության ասպարեզում մարդկանց միջև եղած փոխադարձ հարաբերությունները, որոնք պատմականորեն պայմանավորված են հասարակության զարգացման որոշակի աստիճանով։ Այդ պատճառով էլ աշխատանքն իր բնույթով ու նպատակներով, իր նկատմամբ աշխատավորների վերաբերմունքով հասարակական-տնտեսական տարբեր ֆորմացիաներում որակապես տարբեր է։

Դարեր ու հազարամյակներ շարունակ աշխատանքը ծանր ու անտանելի բեռ է եղել նրանց համար, ովքեր իրենց բազուկներով ու տաղանդով պալատներ են կերտել, բայց ապրել են հետնախորշերում, նյութական բարիքներ են

1 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 188։

արտադրել, բայց թերասնվել են, հրաշալիքներ են ստեղծել, բայց անմասն են մնացել դրանցից։

Դաժան, անմարդկային ճնշման ու շահագործման դարերն ու հազարամյակներն աշխատանքի նկատմամբ ծնեցին ու արմատավորեցին խեղաթյուրված հայացքներ, որպես տանջանքի, որպես ծանր ու ստորացնող բեռի։ Լեզուն՝ պատմության այդ կենդանի վկան, արտացոլել է հարկադրական, անազատ, ծանր աշխատանքի ողջ դառնությունը։ Ստ. Մալխասյանցն իր «Հայերէն բացատրական բառարանում» աշխատանք բառի դիմաց գրում է. «1. Նեղութիւն, չարչարանք, խոնջանք, ճիգ։ 2. Լարումն ֆիզիկական և մտաւոր ոյժերի մի գործ կատարելու համար. գործունեութիւն»։ Այնուհետև «3. Գործ, զբաղմունք, ծառայութիւն՝ իբրև ապրուստի միջոց»[2]։

Աշխատանք բառը նման իմաստ է ունեցել նաև ուրիշ ժողովուրդների լեզուներում։ Ռուսերենում, օրինակ, «труд» բառն իր հիմնական նշանակության հետ միասին օգտագործվել է նաև «ցավ», «տիվանդություն», «վիշտ», «տանջանք» և այլ իմաստներով[3]։

Հասարակությունն իրավահավասար սկզբունքներով վերակառուցելու, աշխատանքը մարդու կենսական պահանջմունքի վերածելու գաղափարները դրդեցրել են մինչմարքսյան շատ մտածողների և առանձնապես ուտոպիստ-սոցիալիստներին։

Աշխատանքի բնույթի փոփոխման հարցերը քիչ թե շատ վերլուծության են ենթարկված ուտոպիական սոցիալիզմի ամենանշանավոր ներկայացուցիչներից մեկի՝ Շարլ Ֆուրիեի աշխատություններում։ Դրանցում կարելի է գտնել ապագա հասարակության ուրվագծերը, որտեղ ամեն մեկը արտադրության մասնակցում է ոչ թե արտաքին հարկադրանքի միջոցով, այլ բուն աշխատանքի գրավչության ուժով։ «...Իր զավակներին կերակրելու անհրաժեշտություն, սովից մեռնելու կամ աղքատների համար բանվորական տուն ընկնելու սարսափ»[4] սրանք են Ֆուրիեի կարծիքով կապիտալիստական հասարակարգում մարդուն աշխատանքի մղող ազդակները։ Նա երազում էր այն մասին, որպեսզի «գտնի սոցիալական նոր կարգ, որը արտադրողներից ամենամիջակի համար անգամ ապահովեր բավականաչափ բարեկեցություն, որպեսզի նա ջերմորեն ու կրքոտությամբ սիրեր իր աշխատանքը»[5]։ Ֆուրիեն նույնիսկ մշակեց աշխատանքը մարդու համար գրավիչ զբաղմունքի վերածելու մի շարք կարևոր միջոցառումներ։

Շ. Ֆուրիեն, ինչպես և ուտոպիական սոցիալիզմի մյուս ներկայացուցիչները, սակայն, չկարողացան բմբռնել, թե հասարակական օբյեկտիվ ինչպիսի օրինաչափություններով է պայմանավորված աշխատանքի բնույթի փոփոխությունը։ Սոցիալիստ-ուտոպիստը հույս ուներ վերակառուցել աշխատանքի, ինչպես նաև մարդկանց կյանքի բոլոր պայմաններն՝ առանց ձեռք տալու մասնավոր սեփականությանը, չոչնչացնելով դասակարգերն ու նրանց միջև եղած տնտեսական անհավասարությունը։ Ֆուրիեն աշխատանքի բնույթի փոփոխման պրոցեսը չէր կապում մեքենայական ինդուստրիայի հետ, արտադրության ռևոլյուցիոն տեխնիկական բազիսի հետ։

---

2 Ստ. Մալխասյանց, Հայերէն բացատրական բառարան, հ. 1, էջ 19։

3 Տե՛ս В. Даль. Толковый словарь, т. IV, էջ 436։

4 Ш. Фурье. Новый промышленный и общественный мир. Соцэкгиз. 1939. էջ 78։

5 Նույն տեղում, էջ 42։

Աշխատանքի ազատագրման, նրա բնույթի արմատական փոփոխման հարցերում մի քայլ առաջ գնացին ռուս ռևոլյուցիոն դեմոկրատները։ Ի տարբերություն բուրժուական լուսավորիչների և սոցիալիստ-ուտոպիստների, ռուս ռևոլյուցիոն դեմոկրատները (Բելինսկի, Չերնիշևսկի, Դոբրոլյուբով, Պիսարև և ուրիշներ) ըմբռնում էին ռևոլյուցիայի անհրաժեշտությունը, հին կարգի բռնի վերացումը՝ նոր հասարակարգի հաղթանակի համար։ Ն. Գ. Չերնիշևսկին աշխատանքի պայմանների արմատական բարելավման և նրա՝ մարդու հաճելի զբաղմունքի վերածվելու ուղին տեսնում էր հասարակության ռևոլյուցիոն վերակառուցման, շահագործողական դասակարգի լիկվիդացման մեջ։ Նա մեծ հավատով ապագա հասարակության նկատմամբ, գրել է. «Աշխատանքը ծանր անհրաժեշտությունից կվերածվի ֆիզիոլոգիական պահանջմունքների թեթև ու հաճելի զոհացման, ինչպես այժմ այդպիսի աստիճանի է բարձրացվում լուսավորյալ մարդկանց մոտ մտավոր աշխատանքը...»[6]։

Սակայն, չնայած այդ ամենին, չհասունացած հասարակական հարաբերությունները պետք է ծնեին և ծնում էին չհասունացած հայացքներ ու թեորիաներ։ Հասարակական կյանքի նկատմամբ իդեալիստական հայացքը նրանց հնարավորություն չտվեց տեսնելու աշխատանքի ազատագրության ճշմարիտ ուղին, ըմբռնելու այն պարզ փաստը, որ աշխատանքի բնույթը որոշվում է ինչպես տեխնիկայի զարգացման մակարդակով, այնպես էլ արտադրության հասարակական պայմաններով։ Նրանք ի վիճակի չեղան մինչև վերջ բացահայտել աշխատանքի դերը հասարակության զարգացման գործում և տալ աշխատանքի պատմականորեն անցողիկ ձևերի գիտական վերլուծությունը։ Նրանք չկարողացան ճիշտ գնահատել պրոլետարիատի դերը որպես հասարակության ռևոլյուցիոն վերափոխիչ վճռական ուժի։

Մարդկային հասարակության գոյության, նրա զարգացման ու կատարելագործման մեջ աշխատանքի համաշխարհային պատմական դերը, նրա բնույթի փոփոխման և մարդու առաջին կենսական պահանջմունքի վերածվելու օրինաչափությունները առաջին անգամ բացահայտեցին մարքսիզմի կլասիկները։ Ավելին, հենց աշխատանքի ռեոի ճիշտ ըմբռնումը Մարքսին և Էնգելսին հնարավորություն ընձեռեց մշակելու գիտականորեն հիմնավորված հայացք հասարակական կյանքի նկատմամբ, ստեղծելու պրոլետարիատի ռևոլյուցիոն աշխարհայացք։

Մարքսիզմի հիմնադիրները աշխատանքի վերլուծությանը մոտենում են կոնկրետ, պատմականորեն՝ սերտորեն կապված աշխատանքի ոչ միայն տեխնիկական, այլև՝ որ շատ կարևոր է, սոցիալական պայմանների հետ։ Աշխատանքի հենց այդ երկու կողմերի միասնությունն ու փոխադարձ կապն էլ հանդիսանում է ամեն մի աշխատանքի բնույթը։

Նյութական բարիքների արտադրության զարգացման տարբեր էտապները կենսագործվել են աշխատանքի տարբեր միջոցների օգնությամբ։ Դրանց զարգացման մակարդակը ցույց է տալիս, թե հասարակությունն ինչ չափով է տիրապետում բնությանը, զարգացման ինչպիսի աստիճանի է հասել արտադրությունը։ Կ. Մարքսը «Կապիտալում» գրել է. «Տնտեսական դարաշրջաններն իրարից տարբերվում են ոչ թե նրանով, թե ինչ է արտադրվում, այլ նրանով, թե ինչպես, աշխատանքի ինչ միջոցներով է արտադրվում։ Աշխատանքի մի-

---

6 Н. Г. Чернышевский, Полное собрание сочинений, т. V, էջ 609։

ջոցները ոչ միայն մարդկային աշխատուժի զարգացման չափանիշն են, այլև հասարակական այն հարաբերությունների ցուցանիշը, որոնցում կատարվում է աշխատանքը»[7]։

Վերլուծելով արտադրության միջոցների մեջ կատարված փոփոխությունները, մենք՝ ըստ էության, դիտում ենք աշխատանքի բնույթի զարգացման միայն մի կողմը՝ տեխնիկական կողմը։

Սակայն միայն այդ բավական չէ։ Նյութական բարիքների արտադրությունը, հետևաբար և տեխնիկայի ու արտադրողի զարգացումը և կատարելագործումը տեղի են ունենում որոշակի հասարակական-տնտեսական հարաբերությունների պայմաններում, որոնց մեջ գլխավորը, աշխատանքի բնույթը որոշողը, վճռականը արտադրական հարաբերություններն են, արտադրության միջոցների սեփականության ձևերը։

Աշխատանքի վրա արտադրական հարաբերությունների ներգործության վերլուծությամբ կարելի է արդեն տեսնել աշխատանքի բնույթի մյուս, որոշիչ կողմը՝ սոցիալական կողմը։

Մարքսիզմը ուսուցանում է, որ արտադրության միջոցների մասնավոր սեփականության վրա հիմնված հասարակարգում և մասնավորապես կապիտալիզմի պայմաններում, աշխատավորը մնալով որպես անհրաժեշտություն զրկվում է իր ստեղծագործական բնույթից, իսկ նրա կրողը՝ աշխատավոր մարդն, իր մարդկային էությունից։ Այդ պրոցեսը խորաթափանց կերպով նկատեց Կ. Մարքսը դեռևս իր «1844 թվականի տնտեսագիտական փիլիսոփայական ձեռագրերում»։

Ըստ Ադամ Սմիթի և Դավիթ Ռիկարդոյի ընդհանրապես աշխատանքն է ստեղծում ապրանքներ, կապիտալ, մասնավոր սեփականություն։ Կ. Մարքսը, սակայն, նկատում էր, որ մասնավոր սեփականությունը և այն ամենը, ինչը բխում է դրանից, ստեղծում է ոչ թե ընդհանրապես աշխատանքը, այլ մարդկային հատուկ գործունեության պատմականորեն որոշակի ձևը ստացված աշխատանքը։

Օտարման հասկացության ճիշտ ըմբռնումն այսօր էլ կարևոր նշանակություն ունի, որովհետև այն դարձել է Կ. Մարքսի վաղ շրջանի աշխատությունների բուրժուական և աջ սոցիալիստական «մեկնաբանների» գործունեության հիմնական օբյեկտներից մեկը։

Օտարման հասկացությունն ունի բազմաթիվ կողմեր։ Դրանցից ամենագլխավորը, որ բացահայտել և ձևակերպել է Կ. Մարքսը, այն է, որ կապիտալիզմը, արտադրության կապիտալիստական եղանակը բանվորին անջատում ևս իր արդյունքներից, այն առարկաներից, որոնցում նա ստարում է իր սեփական մարդկային էությունը։ «Աշխատանքով արտադրված առարկան,— գրում է Կ. Մարքսը,— նրա արդյունքը հակակայվում են աշխատավորին իբրև ինչ-որ խորթ էակ, իբրև մի ուժ, որը կախված չէ արտադրողից»[8]։

Այսպիսով, մարքսյան օտարման կատեգորիան, ըստ էության, բացահայտում է բանվոր դասակարգի դրությունը կապիտալիզմի պայմաններում։ Բանվորի մարդկային էությունն այստեղ օտարվում է հենց այն ժամանակ, երբ նա կենսագործում է ոչ թե իր, այլ ուրիշի նպատակները, երբ նա աշխատում է ոչ

---

7 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 191։

8 К. Маркс, Ф. Энгельс, Из ранних произведений, Госполитиздат, 1956, էջ 560։

թե շրջապատը և ինքն իրեն մարդկայնացնելու կենսական պահանջմունքի, այլ միայն ֆիզիկական գոյությունը քարշ տալու զուտ արտաքին պահանջմունքի ուժով, երբ նա իր աշխատանքի արդյունքում չի գիտակցում իրեն որպես մարդկային էակ, և դրան վերաբերում է որպես խորթ առարկայի, որը հակակայված է իր դեմ և իշխում է իր վրա, երբ աշխատավոր մարդը իջեցվում է մինչև հավելյալ արժեք արտադրելու միջոցի դրությանը։

Մարդու «դիմադրկման», «առարկայացման» նման ձևը հատուկ է կապիտալիզմին, առանց որի անմտածելի է վերջինս։ Կապիտալիստը հաստատում է իրեն այն չափով, որչափով բանվորը վեր է ածվում ապրանքի, իրի։

Բացի այդ, կապիտալիզմի պայմաններում տեղի են ունենում մի շարք այլ պրոցեսներ ևս, որոնք էլ ավելի են ուժեղացնում աշխատանքի պայմանների անտագոնիզմը, խորացնում և մեծացնում են նրա վանող կողմերը։ Քաղաքի և գյուղի, մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև տարաձայնությունը որ երևան եկավ արտադրության միջոցների մասնավոր սեփականության հիմքի վրա, կապիտալիզմը հասցրեց ծայրահեղության։ Քաղաքը ամենադաժան ձևերով շահագործում է գյուղին, նրան հասցնելով աղքատության և ծայրահեղ հետամնացության։ Մտավոր աշխատանքը հետզհետե անջատվում է ֆիզիկական աշխատանքից և հակադրվում նրան որպես թշնամական ուժ։ Աշխատանքի կապիտալիստական բաժանումը բանվորի մոտ արհեստականորեն արմատավորելով միակողմանի հմտություն, ըստ էության, ծնում է նեղ պրոֆեսիոնալ իդիոտիզմ, մեռցնում է նրա մնացած ձիրքերն ու ընդունակությունները։ Ֆ. Էնգելսի դիպուկ արտահայտությամբ՝ աշխատանքի բաժանման հետ մեկտեղ մասերի է բաժանվում և ինքը՝ մարդը։ Մարդկային ինչ-որ մեկ գործունեության զարգացման նպատակով զոհաբերվում են նրա ֆիզիկական և հոգևոր մնացած բոլոր ընդունակությունները։ Կապիտալիզմի ժամանակ աշխատանքը բանվորի համար դառնում է խորթ, օտար ոչ միայն այն պատճառով, որ այն աշխատանք է ուրիշների համար, այլև այն պատճառով, որ աշխատավոր մեծամասնության համար այն մեխանիկական, ոչ ստեղծագործական աշխատանք է։

Կապիտալիզմը հեղաշրջում մտցրեց տեխնիկայի մեջ, որը հեղափոխականացնող ներգործություն ունեցավ աշխատանքի և մարդկանց գիտակցության վրա։ Անցումը մանուֆակտուրայից ֆաբրիկայի, օրինակ, նշանավորեց լիակատար հեղաշրջում տեխնիկայի մեջ և արտադրության կազմակերպման բնագավառում, որոնց և անխուսափելիորեն հետևեց հասարակական հարաբերություններում ամենախոր հեղաբեկումը։

Սակայն կապիտալիզմի պայմաններում մեքենան, ինչպես նաև արտադրության տեխնիկական ամեն մի առաջադիմություն, միաժամանակ նշանակում էր հետադիմություն շահագործվող դասակարգերի դրության մեջ։ «Ամեն մի բարիք մեկի համար,— գրել է Էնգելսը,— անհրաժեշտաբար չարիք է մյուսների համար. մի դասակարգի յուրաքանչյուր նոր ազատագրում, նոր ճնշում է մի ուրիշ դասակարգի համար։ Դրա ամենափայլուն ապացույցը հանդիսանում է մեքենաների ներմուծումը...»[9]։

---

9 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս. Ընտիր երկեր. հ. 2, էջ 417։

Սակայն աշխատանքի, մարդու էության օտարումը, նրա «դիմազրկումն» ու «առարկայացումը» ճակատագրական, հավիտենական երևույթներ չեն, ինչպես պնդում են բուրժուական գաղափարախոսները։ Գիտական կոմունիզմի հիմնադիրները մշտապես ուսուցանում էին, որ բանվորը չի կարող հավերժ մնալ իրերի դրության վիճակում։ Նա կարող է կատարել իր պատմական միսիան, ազատագրվել իր ուժերի և ընդունակությունների առարկայացումից այն չափով, ինչ չափով նա գիտակցելով այդ առարկայացումը, պայքարում է սոցիալական այն հարաբերությունների դեմ, որոնք բացասում են նրան իբրև մարդկային էակ։

Կ. Մարքսը, դեռևս իր վաղ շրջանի աշխատություններում, հիմնավորում էր, որ օտարումից, մարդկային ուժերի և ընդունակությունների առարկայացումից ազատագրվելու ուղին մարդու կողմից մարդու շահագործման ոչնչացումն է, մասնավոր սեփականության վերացումը։ «Մասնավոր սեփականության, որպես մարդկային կյանքի յուրացման դրական վերացումը,— գրում էր նա,— ամեն մի օտարման դրական վերացումն է, այսինքն մարդու վերադարձը... իր մարդկային, այսինքն հասարակական կեցության»[10]։

Սոցիալական այդ վիթխարի ու բարդ պրոբլեմը լուծեց պրոլետարական-սոցիալիստական ռևոլյուցիան։ Այն հանդես եկավ որպես շահագործումից աշխատանքի ազատագրման և նրա բնույթի արմատական փոփոխմանը նպաստող հիմնական և գլխավոր միջոց, որը ոչնչացրեց շահագործողական դասակարգերի քաղաքական իշխանությունը, լիկվիդացրեց արտադրության միջոցների մասնավոր սեփականությունը և ժողովրդական մասսաներին միատեսակ դրության մեջ դրեց արտադրության միջոցների ու գործիքների նկատմամբ։ Այդ հիմքի վրա էլ արմատական հեղաբեկում տեղի ունեցավ աշխատանքի բնույթում։

Մարքսիզմ-լենինիզմը ուսուցանում է, որ կոմունիստական հասարակարգի առաջին փուլում արտադրողական ուժերի ոչ բավարար զարգացման հետևանքով աշխատանքը դեռևս մասնակիորեն պահպանում է իր նախկին բնույթը և կազմակերպման ձևերը, այն մնում է որպես անհրաժեշտություն, հանդես է գալիս որպես հասարակության և նրա յուրաքանչյուր անդամի գոյության և կյանքի միջոց։ Կոմունիզմի ժամանակ ևս աշխատանքը կմնա որպես կյանքի ապրյուր, մարդկանց պահանջմունքների բավարարման միջոց։ Սակայն, ինչպես նշում էր Մարքսն իր «Գոթայի ծրագրի քննադատություն» հայտնի աշխատությունում, կոմունիստական հասարակության բարձրագույն փուլում «աշխատանքը կդադարի լոկ ապրուստի միջոց լինելուց, այլ ինքը կդառնա կյանքի առաջին պահանջ...»[11]։ Այդ, իրոք համաշխարհային պատմական խնդրի լուծումը, սակայն, Մարքսը հենց նույն աշխատությունում անխզելի կապի մեջ էր դնում կոմունիստական շինարարության մի շարք արմատական պրոբլեմների կենսագործման հետ։ Նա գտնում էր, որ ամենից առաջ անհրաժեշտ է վերացնել աշխատանքի այնպիսի բաժանումը, որը մարդուն ենթարկում է իրեն, ստրկացնում է նրան։ Այնուհետև, պետք է լիկվիդացնել մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրությունը, ստեղծել արտադրողական ուժերի զարգացման այնպիսի վիճակ, որը հնարավորություն տա, որպեսզի հասարակության

10 К. Маркс, Ф. Энгельс, Из ранних произведений, էջ 589։
11 Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 2, էջ 19։

հարստության բոլոր աղբյուրները հոսեն լիառատ հեղեղի նման և հասարակության յուրաքանչյուր անդամ բավարարվի ըստ պահանջմունքի։ Եվ, վերջապես, ստեղծել բոլոր պայմաններն անհատի բազմակողմանի զարգացման համար, որպեսզի նա իր ընդունակությունների լիակատար չափով աշխատի հօգուտ հասարակության։

Այս բազմապիսի ու բարդ խնդիրները չեն լուծվում միանգամից և հարթ ճանապարհով։ Դրանց կենսագործման ընթացքում քայլ առ քայլ լուծվում են կոմունիստական աշխատանքի ձևավորման հետ կապված մի շարք հակասություններ։

Սոցիալիզմը և կոմունիզմը կոմունիստական հասարակարգի զարգացման երկու փուլերն են, ըստ որում առաջինը սկզբնական, ավելի ցածր աստիճանը, իսկ երկրորդը՝ բարձրագույն, ավարտուն աստիճանը։ Կոմունիստական հասարակարգի այդ երկու փուլերն ունեն ընդհանուր հիմք, ինչպես նաև ընդհանուր և տարբերիչ գծեր։ Գլխավորն այստեղ նրանց ընդհանուր գծերն են և զարգացման դիալեկտիկան այնպիսին է, որ աստիճանաբար հաղթահարվում են սոցիալիզմին բնորոշ սահմանափակությունները և ընդհակառակն՝ աճում, հասունանում են կոմունիզմի սաղմերն ու ծիլերը։

Սոցիալիզմի և կոմունիզմի ժամանակ աշխատանքի ընդհանուր, միատիպ գծերը պայմանավորված են ամենից առաջ նրանով, որ դրանց տնտեսական հիմքը արտադրության միջոցների հանրային սեփականությունն է։

Չխոսելով սոցիալիստական աշխատանքի բնորոշ գծերի և առանձնահատկությունների մասին, պետք է նշել, որ կոմունիստական աշխատանքն անմիջականորեն ծագում և զարգանում է սոցիալիստական աշխատանքից, նրա բազայի վրա։ Բայց այդ դեռևս չի նշանակում, թե նրանց միջև ոչ մի տարբերություն չկա։ Վ. Ի. Լենինը կոմունիստական աշխատանքը, բառիս ավելի նեղ, ավելի խիստ առումով, տարբերում էր սոցիալիստական աշխատանքից։ Իսկ այդ տարբերություններն, իրոք, էական են և անվիճելի։ Դրանք, վերջին հաշվով, պայմանավորված են արտադրողական ուժերի զարգացման մակարդակով, տնտեսական, արտադրական հարաբերությունների հասունության աստիճանով, հասարակության անդամների կուլտուրայի և գիտակցականության մակարդակով։

Պետք է նշել, որ մեզ մոտ առանձին ընկերներ չեն տեսնում սոցիալիստական և կոմունիստական աշխատանքների միջև եղած էական տարբերությունները։ Նրանք դատում են այսպես. սոցիալիզմն ու կոմունիզմը ունեն տարբեր սկզբունքներ՝ «Յուրաքանչյուրից՝ ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ աշխատանքի» և «Յուրաքանչյուրից՝ ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ պահանջմունքի»։ Ըստ այդ ընկերների, թե՛ մեկ և թե՛ մյուս սկզբունքի առաջին մասերը համընկնում են։ Նշանակում է սոցիալիզմի և կոմունիզմի միջև տարբերությունը ոչ թե աշխատանքի պահանջի մեջ է, այլ երկրորդի՝ բաշխման բնագավառում եղած տարբերության մեջ։ Սա կոպիտ սխալ է. աշխատանքը ըստ ընդունակությունների երբեք ու երբեք չի կարելի անջատել տնտեսական ու հոգևոր այն պայմաններից, որոնցում կենսագործվում է այն։ Ճիշտ է, և՛ սոցիալիզմի, և՛ կոմունիզմի ժամանակ հասարակությունը յուրաքանչյուրից պահանջում է աշխատել իր ուժերի և ընդունակությունների լիակատար չափով։ Սակայն պետք է անպայման նկատի ունենալ, որ կոմունիզմին անցնելով, այդ պահանջը բովանդակությունը որակապես

փոխվում է այնքանով, որքանով արմատական փոփոխության են ենթարկվում աշխատանքի, մարդկանց ընդունակությունների զարգացման համար անհրաժեշտ պայմանները՝ հասարակության անդամների դիտակցությունը։

Սոցիալիզմի ժամանակ արտադրողական ուժերի զարգացման մակարդակը դեռևս հնարավորություն չի տալիս մի շարք տեղամասերում վերացնելու ֆիզիկական ծանր, մոնոտոն, հոգնեցուցիչ աշխատանքը։ Հասարակական արտադրության առանձին բնագավառներում դեռևս ցածր է աշխատանքի մեքենայացման, առավել ևս ավտոմատացման աստիճանը։ Հաղթահարելով կյանքի բարձրագույն, կոմունիստական ձևերին անցնելու՝ հասարակության շարժման տենդենցի ու օբյեկտիվ պահանջմունքի և արտադրողական ուժերի, աշխատանքի արտադրողականության մակարդակի միջև եղած հակասությունը, լիակատար հնարավորություններ կստեղծվեն աշխատանքի պայմաններն արմատապես բարելավելու համար։

Սոցիալիզմը ոչնչացրեց մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակադրությունը և հնարավորություն ստեղծեց գործունեության այդ երկու բնագավառների աշխատողների կուլտուր-տեխնիկական մակարդակի մերձեցման համար։ Սակայն սոցիալիզմը չի հաղթահարում աշխատանքի այդ երկու բնագավառների միջև եղած էական տարբերությունները։

Կոմունիզմն,— ասված է ՍՄԿՊ ծրագրում,— կլուծի սոցիալական դարավոր պրոբլեմը՝ մարդկանց արտադրական գործունեության մեջ օրգանապես կմիավորվեն մտավոր և ֆիզիկական աշխատանքը։ Աշխատանքի այդ տարատեսակները կդառնան միևնույն մարդու կենսագործունեության տարբեր, բայց և միաժամանակ անխզելի կողմերը։

Հանրային հարստության սեփ և հատկապես «Յուրաքանչյուրին՝ ըստ պահանջմունքի» բաշխման կոմունիստական սկզբունքի կիրառման շնորհիվ կվերանան անհատի ձգտումներին և ընդունակություններին համապատասխան զբաղմունքի ազատ ընտրության բոլոր խոչընդոտները։ Վերջնականապես անցյալի դիրկ կանցնի մարդու ցմահ դամվածությունը զբաղմունքի որոշակի տեսակի կամ պրոֆեսիայի, որը մարդկանց վեր է ածում միակողմանի զարգացած անհատների։

Սոցիալիզմի ժամանակ աշխատանքի հիմնական ազդակն աշխատավորի անձնական, նյութական շահագրգռվածությունն է, որը զուգորդվում է հասարակական, բարոյական ազդակների հետ։ Ըստ աշխատանքի որակի և քանակի բաշխման սոցիալիստական սկզբունքի կիրառումը որոշակի դեր է կատարում աշխատանքի արտադրողականության, աշխատավորների որակավորման բարձրացման, արտադրության անընդհատ կատարելագործման համար։

Կոմունիստական աշխատանքն, ընդհակառակը, արդեն չի նախատեսում յուրաքանչյուր աշխատողի՝ իր աշխատանքի դիմաց իբրև վարձատրություն ստացած միջոցների քանակի և որակի վրա հասարակական վերահսկողություն։ Նյութական բարիքների առատությունը հնարավորություն կտա լիովին բավարարելու մարդկանց կենսական պահանջմունքները, իսկ նրանց դիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկների հաղթահարումը կբացառի աշխատանքը ներդրավելու որևէ հարկադրանք։ Այս պայմաններում արդեն հարկ չի լինի բարձր վարձատրությամբ խրախուսել լավ աշխատանքը կամ աշխատողի անձնական-նյութական շահագրգռվածությունը իր աշխատանքի արդյունքների նկատմամբ։ Վ. Ի. Լենինի խորը և սպառիչ բնութագրությամբ կոմունիստական

աշխատանքը «...բառիս ավելի նեղ, ավելի խիստ առումով նշանակում է անվճար աշխատանք հասարակության օգտին, մի աշխատանք, որը կատարվում է ոչ թե որոշակի պարհակ կրելու համար, ոչ թե որոշ մթերքներ ստանալու իրավունքի համար, ոչ թե նախապես սահմանված և օրինականացված նորմաներով, այլ կամավոր աշխատանք, նորմաներից դուրս աշխատանք, մի աշխատանք, որը տարվում է վարձատրություններ նկատի չունենալով, առանց վարձատրության պայմանների, մի աշխատանք, որը կատարվում է ընդհանուրի օգտին աշխատելու սովորությամբ և ընդհանուրի օգտին աշխատանքի անհրաժեշտության նկատմամբ գիտակից (արդեն սովորություն դարձած) վերաբերմունքով, մի աշխատանք, որը պահանջմունք է առողջ օրգանիզմի համար»[12]

Կոմունիստական աշխատանքի լենինյան բնորոշումից պարզ ու որոշակի երևում է, որ նախ՝ կոմունիզմի ժամանակ իր նշանակությունը կորցնում է աշխատողի անձնական, նյութական շահագրգռվածությունն իր աշխատանքի արդյունքների նկատմամբ։ Այժմ արդեն առաջին պլան են մղվում աշխատանքի այնպիսի հզոր ազդակներ, ինչպիսիք են հասարակության նյութական շահագրգռվածությունը և բարոյական շահագրգռվածությունը, որոնք նոր հասարակության անդամների բարձր գիտակցության արտահայտությունն են։ Այդ ազդակները, ըստ էության, միաձույլ կերպով արտահայտում են հասարակական շահագրգռվածությունը նյութական բարիքների արտադրության անընդհատ զարգացման գործում, բարիքներ, որոնցից օգտվում է ինչպես հասարակությունն ամբողջությամբ վերցրած, այնպես էլ նրա յուրաքանչյուր անդամը։

Աշխատանքի բնույթի մեջ, ինչպես կիզակետում, դրսևորվում է տվյալ հասարակական կարգի սոցիալ-տնտեսական էությունը. կոմունիստական աշխատանքի լենինյան բնորոշումից կարելի է լիովին դատել կոմունիստական հասարակարգի էության, նրա տնտեսական ու հոգևոր զարգացման մակարդակի մասին։

Եթե մարդն աշխատում է ոչ թե հարկադրանքով, այլ կամավոր, իր ուժերի և ընդունակությունների լիակատար չափով, ապա նշանակում է, որ աշխատանքի ազդակները օրգանապես հատուկ են արտադրողին, դրանք բխում են նրա գիտակցությունից, նրա բարոյական համոզմունքներից։ Եթե դա անվճար աշխատանք է հօգուտ հասարակության, նախօրոք չսահմանված ու չնորմավորված, առանց վարձատրությունը հաշվի առնելու, առանց վարձատրության պայմանների աշխատանք, ապա տրամաբանորեն հետևում է, որ հասարակությունը տիրապետում է մարդկանց աշխատանքի մեջ ներգրավելու նոր ձևերին ու մեթոդներին, ընդ որում ակնառու է, որ աշխատանքի խթանիչ մոտիվը երբեք էլ անձնական, նյութական շահը չէ։

Այնուհետև, կոմունիստական աշխատանքի լենինյան բնորոշումից երևում է նաև, որ հասարակությունն ունի արտադրողական ուժերի զարգացման այնպիսի մի մակարդակ և նյութական բարիքների այնպիսի առատություն, որը կարող է լիովին ապահովել իր անդամների պահանջմունքները։

Արտադրողական ուժերի զարգացման բարձր մակարդակը և նյութական բարիքների առատությունն իրենց հերթին վկայում են գլխավոր արտադրողա-

---

12 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 661։

կան ուժի՝ մարդու բազմակողմանի զարգացման, նրա անսահման հնարավորությունների և նրա աշխատանքի բարձր էֆեկտիվության մասին։

Կոմունիստական աշխատանքի լենինյան բնորոշումից երբեք էլ չի հետևվում, թե կոմունիզմի ժամանակ աշխատանքը կդադարի պարտականություն լինելուց։ Ընդհակառակն, աշխատանքը միշտ եղել է կյանքի առաջին պայմանը, այդպիսին նա կմնա նաև կոմունիզմի ժամանակ։ Կոմունիստական հասարակությունը արմատապես փոխելով աշխատանքի բնույթը, հասարակության անդամներին երբեք էլ չի ազատում աշխատանքից։ Ամեն մի աշխատունակ մարդ, ինչպես նշված է ՍՄԿՊ ծրագրում, կմասնակցի հասարակական աշխատանքին և կապահովի հասարակության նյութական ու հոգևոր հարստությունների անընդհատ աճը։

Կոմունիզմի ժամանակ աշխատանքը կմնա որպես սուբյեկտիվ անհրաժեշտություն։ Սակայն, դա արդեն նախկին անհրաժեշտությունը չէ, այլ գիտակցված անհրաժեշտությունն այն բանի որ աշխատանքը հասարակության կյանքի և զարգացման անքակտելի պայմանն է։ Եվ այնքանով, որքանով կոմունիստական հասարակության անդամը ոչ միայն գիտակցում է աշխատանքի անհրաժեշտությունը, այլև նպատակադրված ձևով իրագործում է այն, այդքանով էլ աշխատանքը կոմունիզմի ժամանակ հանդես է գալիս արդեն որպես ազատ աշխատանք։

Աշխատանքի անհրաժեշտությունը չի հակադրվում նրա ազատությանը. ընդհակառակը, եթե ազատությունը գիտակցված անհրաժեշտություն է, ապա ազատ աշխատանքի շատ կարևոր պայմանը ամբողջ հասարակության բարգավաճման համար աշխատելու անհրաժեշտության գիտակցումն է։

Դեռևս իր ժամանակ Կ. Մարքսը քննադատում էր Ա. Սմիթին այն բանի համար, որ վերջինս կապիտալիստական աշխատանքի առանձնահատկությունները տարածելով ամեն կարգի աշխատանքի վրա, աշխատանքն ընդհանրապես ըմբռնում էր որպես անհատի ազատության սահմանափակում, զոհաբերություն, մի գործունեություն, որտեղ աշխատողը ստիպված է զոհաբերել, մշտապես նրան տալ իր հանգստի, ազատության և ուրախության մի մասը։

Առարկելով Սմիթին, Մարքսն ասում էր, որ նա նույնիսկ չի ենթադրում, որ անհատի կողմից իր առջև դրված նպատակին հասնելու համար արգելքների հաղթահարումը, որը կենսագործվում է աշխատանքի օգնությամբ, ինքնին հանդիսանում է ազատության դրսևորում։ Այն նշանակում է սուբյեկտի ինքնակենսագործունեություն և դրա համար էլ իսկական ազատություն, որի արտահայտությունը հենց աշխատանքն է։ Սակայն այդպիսի արտահայտությունը, նկատում էր Մարքսը, հնարավոր է միայն այն ժամանակ, երբ աշխատանքի նպատակը աշխատողին չի պարտադրվում բռնի, այլ առաջադրվում է հենց իրեն՝ աշխատավորի կողմից։

Կոմունիզմը չի լինի անարխիայի, դատարկապորտության և պարապ ժամանցի հասարակություն։ Այստեղ աշխատանքային կարգապահությունն անկասկած, այնքան բարձր կլինի, որ պրակտիկորեն կբացառի դրա խախտման ամեն մի հնարավորություն։ Իհարկե, այդ կարգապահությունը կապահովվի ոչ թե հարկադրանքով, այլ հասարակական պարտքի ըմբռնմամբ, կոմունիստական հասարակարգի ողջ կազմությամբ։

Կոմունիզմի ժամանակ աշխատանքը կդառնա ոչ միայն պարզապես հասարակական պարտականություն, այլև անհատի անձնական, ներքին, կենսա-

կան պահանջմունք, նրա ընդունակությունների և ձիրքերի դրսևորման գլխավոր միջոց։

Աշխատանքի, որպես կենսական առաջին պահանջմունքի, գիտական կոմունիզմի ըմբռնումն արմատապես տարբերվում է աշխատանքի բնույթի այն պատկերացումից, որ արտահայտել են սոցիալիստ-ուտոպիստները։ Հայտնի է, օրինակ, որ Շ. Ֆուրիեն ապագա սոցիալիստական հասարակարգում աշխատանքը պատկերացնում էր զվարճանքի, հասարակ խաղի ձևով։ Նա, ըստ էության, աչքաթող էր անում այն հանգամանքը, որ աշխատանքի արմատական գծերից մեկը բնության տարերային ուժերը սանձելու, դրանք կառավարելու համար մարդու մղած պայքարի պրոցես է։ Իր զարգացման մեջ լինելով անընդհատ ու անվերջ, այդ պրոցեսը մշտապես մարդուց պահանջում է մեծ լարվածություն։ Քննադատելով Ֆուրիեի միամիտ և սահմանափակ պատկերացումները, Կ. Մարքսն իր «Քաղաքատնտեսության քննադատության հիմնական գծերը» (1857—1858 թթ.) ձեռագրերում նշում էր, որ իսկական ստեղծագործական աշխատանքը, օրինակ, կոմպոզիտորի աշխատանքը, հանդիսանում է «հոեշավոր լուրջ գործ», մեծագույն լարվածություն։ Ստեղծագործական աշխատանքը խաղ կամ զվարճանք չէ և չպետք է սնվել այն իլյուզիաներով, թե ապագայում մարդուն հարկ չի լինի հաղթահարել դժվարությունները։ Այնտեղ, որտեղ կա աշխատանք, բոլոր դեպքերում կան նաև դժվարություններ, լարվածություն, մարդկային մտքի, մկանների ակտիվ գործունեություն։

Աշխատանքը, ինչպես նշեցինք վերևում, կոմունիզմի ժամանակ միջոցից կդառնա կենսական պահանջմունք։ Աշխատանքի պահանջմունքը երբեմն համեմատում են սննդի, օդի, ջրի պահանջմունքի հետ։ Սակայն սննդի, ջրի և մյուս մթերքների պահանջմունքը միայն ֆիզիոլոգիական կարգի պահանջմունք է և կրում է բնական բնույթ։ Աշխատանքի պահանջմունքը ֆիզիոլոգիական և հոգեբարոյական պահանջմունքների ամբողջություն է, որի բավարարումն իր արդյունքներով արմատապես տարբերվում է մյուս պահանջմունքների բավարարումից։ Եթե ֆիզիոլոգիական և հոգևոր մնացած պահանջմունքների բավարարումը տեղի է ունենում արդեն ստեղծված նյութական բարիքների սպառումով, ապա աշխատանքի պահանջմունքի բավարարման պրոցեսում ստեղծվում են նյութական և հոգևոր նոր արժեքներ։

Կոմունիզմի ժամանակ նյութական բարիքների առատությունը հնարավորություն կտա լիովին բավարարելու մարդկանց սննդի, հագուստի, բնակարանի և մյուս կենսական պահանջմունքները և այդ հիմքի վրա առաջին պլան կանցնի արդեն ոչ թե սպառողական բնույթի, այլ արտադրական բնույթի պահանջմունքը, որը մարդուն զարգացնում է թե՛ ֆիզիկապես և թե՛ հոգեպես։ Եվ երբ մարդկանց տարրական կենսական պահանջմունքները, որոնք մեծ մասամբ բիոլոգիական, ֆիզիոլոգիական բնույթի են, բավարարվեն ամբողջությամբ և լիակատար չափով, առաջին պլան կանցնեն բարձրագույն պահանջմունքները և դրանցից ամենաավելը՝ աշխատանքի պահանջմունքը, որպես մարդու կենսագործունեության ու ինքնարտահայտման գլխավոր ձև։

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը ուսուցանում էին, որ աշխատանքն առաջին կենսական պահանջմունք կդառնա միայն այն դեպքում, երբ այն ազատվի իր վանող կողմերից, դառնա թեթև, չհոգնեցնող, բարձր արտադրողական, ստեղծագործական։ Այդպիսի պայմաններում մարդը կաշխատի ոչ միայն նրա համար, որ այն պետք է իր և ընտանիքի համար, նրան աշխատանքի կմղի ստեղծա-

գործելու, որոնելու, գիտական, տեխնիկական, կազմակերպական խնդիրներ լուծելու բուռն ձգտումը։ Նրան աշխատանքի կմղի ոչ թե աշխատավարձը, այլ բարձր գիտակցությունը, նոր ձևով ըմբռնված անձնական շահը, որը լիովին համընկնում է հասարակական շահի հետ։

Մեր օրերում կոմունիզմի բացահայտ թշնամիները չըմբռնելով այն հասարակ փաստը, որ վերաբերմունքն աշխատանքի նկատմամբ բխում է հենց նրա բուն էությունից, նրա ներքին բնույթից, ամեն կերպ ձգտում են գործն այնպես պատկերացնել, թե իբր աշխատանքը միայն մարդկային մկանների, ուղեղի ու ներվերի էներգիայի հասարակ ծախսում է և որ այն երբեք չի դառնա կենսական պահանջ։ Արդի բուրժուազիայի գաղափարախոսներից մեկը՝ Լ. Միզեսն, օրինակ, առարկելով Մարքսին պնդում է, թե չի կարելի հուսալ, որ աշխատանքը երբևէ կարող է դառնալ կենսական պահանջմունք, հաճույքի աղբյուր։ «Քանի որ,— գրում է նա,— վերանում է կապը աշխատանքի արդյունքի և եկամուտի միջև, ինչպես այդ պետք է լինի սոցիալիստական հասարակարգում, ապա անհատը միշտ կաշխատի այն տպավորությամբ, թե իր վզին չափից ավելի բեռ է դրված... Այդ զգացումից էլ ծնվում է ատելություն աշխատանքի նկատմամբ, որը խեղդում է նրա կենսագործման հաճույքը»[13]։

Հասկանալի է, որ կոմունիստական աշխատանքի նման մեկնաբանումը հեռավոր կապ անգամ չունի իրականության հետ և հետապնդում է նրա ուղղակի խեղաթյուրման նպատակ։ Լ. Միզեսն, ամենից առաջ, կոմունիզմը պատկերացնում է միայն սպառողական տեսանկյունից, ըստ էության, նրան մոտենալով քաղքենիաբար։ Այնուհետև, նա չի ցանկանում ըմբռնել, որ կոմունիզմի ժամանակ ողջ հասարակության օգտին աշխատանքը դառնում է մարդու ամենօրյա վարքագծի նորմա, սովորույթ, որը լիովին համընկնում է նրա ներքին պահանջմունքների և ամենից առաջ ստեղծագործելու պահանջմունքի հետ, իսկ վերջինս չի կարելի բավարարել այլ կերպ, քան միայն աշխատանքում։

Աշխատանքի պահանջմունքը անհատի մտավոր և ֆիզիկական ունակությունների բազմակողմանի և անընդհատ զարգացման ու կատարելագործման պահանջմունք է։ ՍՄԿՊ XXII համագումարը նշեց, որ անհատի համակողմանի զարգացման հիմքը ստեղծագործական աշխատանքն է։ Այստեղ պատահական չէ, որ շեշտված է ստեղծագործական աշխատանքը, որովհետև ոչ թե ամեն մի աշխատանք, այլ հենց ստեղծագործական աշխատանքն է բազմակողմանիորեն ու ներդաշնակ զարգացնում անհատի մտավոր ու ֆիզիկական կարողությունները։

Աշխատանքի ստեղծագործական բնույթը ձեռք է բերվում գիտա-տեխնիկական պրոգրեսի, աշխատավորների կուլտուր-տեխնիկական մակարդակի անընդհատ աճի բազայի վրա։ Այստեղ, ըստ էության, ստացվում է մի վիճակ, երբ աշխատանքի պրոցեսը օբյեկտիվորեն և անհրաժեշտաբար պահանջում է ստեղծագործություն, իսկ վերջինս, իր հերթին, բարձր խնդիրներ է առաջադրում աշխատողի կուլտուր-տեխնիկական մակարդակի նկատմամբ։ Այս ուղիով ընթանալով, իրականություն կդառնա Մարքսի կանխատեսությունն այն մասին, որ աշխատանքը կոմունիզմի ժամանակ ձեռք կբերի գիտական բնույթ և դրանով էլ նյութական բարիքների արտադրության բնագավառում աշխատողին

---

13 Մեջբերումը կատարված է՝ С. А. Хавин. Против буржуазных экономических псевдотеорий социализма գրքից. Экономиздат. 1962, էջ 90։

կպատճառի այնպիսի ստեղծագործական հաճույք, ինչպիսին ճաշակում են գիտության, գրականության ու արվեստի աշխատողները, երբ նրանք աշխատում են ըստ կոչման։

Աշխատանքի պահանջմունքը մարդկային առողջ օրգանիզմի նորմալ կենսագործունեության պահանջմունք է։ Սակայն, որպեսզի այն մարդկային օրգանիզմին միայն օգուտ բերի, չպետք է լինի չափից ավելի տևական, ծանր և հոգնեցուցիչ։ Աշխատանքի պայմանների արմատական բարելավում և հեշտացում, արտադրական պրոցեսների կոմպլեքսային մեքենայացում ու ավտոմատացում, բանվորական օրվա կրճատում — ահա մարդկային օրգանիզմի վրա աշխատանքի վնասակար ներգործության հաղթահարման գլխավոր ուղիներից մի քանիսը։

Կոմունիզմի կառուցումով չի վերանում ֆիզիկական աշխատանքը։ Արմատապես փոխվում են մարդու ֆիզիկական գործունեության ձևերն ու բովանդակությունը, բայց այն, որպես անհատի ներդաշնակ զարգացման կարևորագույն միջոց, մնում է։ Միանգամայն իրավացի էր մեծ ֆիզիոլոգ Ի. Մ. Սեչենովը, հայտարարելով, որ աշխատանքը միշտ եղել է և կմնա մարդու մկանային սիստեմի կենսական ֆունկցիա, որքան էլ ժամանակակից տեխնիկան մարդու մկանային աշխատանքը դուրս մղի արտադրական կյանքից։ Եվ դրանում պետք է տեսնել ոչ թե մարդու դժբախտությունը, այլ մեծագույն բարիքը նրա համար։ Չի կարելի պատկերացնել բազմակողմանիորեն, ներդաշնակ զարգացած մարդ, առանց ֆիզիկական կատարելության, որի աղբյուրը ամենից առաջ աշխատանքն է։

Այսպիսով, կոմունիստական հասարակարգի անդամների՝ աշխատանքի նկատմամբ պահանջմունքը կլինի միաժամանակ և մտավոր, և ֆիզիկական պահանջմունք։

Մարքսիզմ-լենինիզմը գտնում է, որ անցումը սոցիալիստական աշխատանքից դեպի կոմունիստականի երկարատև, պատմական պրոցես է, որը տեղի է ունենում օբյեկտիվորեն, հասարակության զարգացման, կոմունիզմի շինարարության օրենքներին լիովին համապատասխան։ Դա աստիճանական մի պրոցես է, որը սերտորեն կապված է հասարակության էկոնոմիկայի և կուլտուրայի խորագույն փոփոխությունների հետ և կենսագործվում է ծագող հակասությունների հաղթահարման, հասարակական-տնտեսական, քաղաքական ու գաղափարական ընդհանրության պայմաններում։

Քանի որ կոմունիզմը զարգանում է իր սեփական հիմքի վրա, ուրեմն և անցման շրջանում բացառվում է տնտեսական հիմքի խորտակման անհրաժեշտությունը։ Ընդհակառակը, նոր պայմաններում հասարակական կյանքի հիմքի՝ արտադրության միջոցների հանրային սեփականության հետագա զարգացումն ու ամրապնդումը հանդես է գալիս որպես անհրաժեշտ նախադրյալ կոմունիստական աշխատանքի հաղթանակի համար։

Վ. Ի. Լենինը դեռևս իր «Ինչ են «ժողովրդի բարեկամները» և ինչպես են նրանք մարտնչում սոցիալ-դեմոկրատների դեմ» աշխատությունում նշում էր, որ «... ինչ հասարակական երևույթ էլ քննելու լինենք. նրա զարգացման պրոցեսում, նրա մեջ միշտ էլ կլինեն անցյալի մնաչորդներ, ներկայի հիմքեր ու ապագայի սաղմեր»[14]։ Լենինյան այս դրույթն ամբողջությամբ վերաբերում է

14 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 1, էջ 212։

նաև սոցիալիստական աշխատանքի զարգացման պրոցեսին։ Սոցիալիստական աշխատանքը արտադրողական ուժերի ոչ բավարար զարգացման հետևանքով դեռևս մասնակիորեն պահպանում է հնի մնացուկները։ Այդ հին, սակայն, կոմունիստական շինարարության պայմաններում հիմքեր չունի հետագա զարգացման համար։ Հասարակության առաջընթացի հետ մեկտեղ այն մահանում է։ Ինչ վերաբերում է բուն սոցիալիստական աշխատանքի ձևերին, որոնք կոմունիստական ձևերի հետ ունեն զարգացման ընդհանուր հիմք, ապա դրանք իրենց բացասում են միայն աննախընթաց զարգացման միջոցով։ Ապագայի, կոմունիստական աշխատանքի տարրերը մեկ անգամ ծագելով, անցման ողջ ընթացքում չեն մնում անփոփոխ։ Դրանք նույնպես զարգանում, կատարելագործվում են, ըստ որում այդ պրոցեսն իր մեջ ներառում է նաև հնացած մի քանի գծերի մահացում և նոր, ավելի առողջ գծերի կազմավորում։

Б. Г. Ананикян

ОСОБЕННОСТИ И ХАРАКТЕРНЫЕ ЧЕРТЫ КОММУНИСТИЧЕСКОГО ТРУДА

Резюме

Труд свойствен только человеку, вечное и естественное условие существования человеческого общества, его развития и совершенствования. Будучи перводвигателем всех изменений общественной жизни, труд в ходе развития подвергается коренным изменениям, обогащаясь новыми чертами и особенностями.

В высшей фазе коммунистического общества, отмечает К. Маркс, труд перестанет быть лишь средством существования и превратится в первую потребность жизни.

Классическое определение коммунистического труда дал В. И. Ленин. По этому определению можно полностью оценить сущность коммунистического общества, уровень его экономического и духовного развития.

Исходя из ленинского определения коммунистического труда и практики коммунистического строительства, автор показывает особенности и характерные черты коммунистического труда.

Коммунистический труд — это бесплатный труд в пользу общества, первейшая жизненная потребность, осознанная необходимость, именно потому и в полном смысле слова — свободный труд.

Марксизм-ленинизм считает, что переход от социалистического труда к коммунистическому — долгий исторический процесс, происходящий объективно в полном согласии с законами общественного развития. коммунистического строительства. Это постепенный процесс, тесно связанный с глубокими изменениями экономики и культуры общества, с преодолениями имеющихся противоречий, осуществляется в условиях общественно-экономической, политической и культурной общности.

По пути, намеченному XXII съездом КПСС, наше общество идет к победе коммунизма, к победе коммунистического труда.